Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Ս. Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Ոսկեհատ Իսախանյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Զիմբաբվեի Հանրապետության Վիկտորիա Ջրվեժ բնակավայր՝ փետրվարի 27-29, 2024 թվական
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Ազգային հարմարվողականության ծրագրի գլոբալ ցանց և Զիմբաբվեի կառավարություն
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Ազգային հարմարվողականության ծրագրի գլոբալ ցանցի և Զիմբաբվեի կառավարության համատեղ նախաձեռնությամբ «Ազգային հարմարվողականության ծրագրի պլանավորումից մինչև իրականացում» թեմայով աշխատաժողովի նպատակն էր՝
   - Գնահատել, թե հարմարվողականության առաջնահերթությունները որքանո՞վ են ինտեգրված ռազմավարական փաստաթղթերում և ըստ այդմ վեր հանել առկա բացերը,
   - քննարկել և հասկանալ, թե ինչպե՞ս պետք է հասցեագրել ազգային հարմարվողականության առաջնահերթությունները ռազմավարական ծրագրերի և միջոցառումների մշակման գործընթացներում, հարմարվողականության միջոցառումների իրականացումը ժամանակին, համակարգված և արդյունավետ ավարտին հասցնելու համար,
   - վեր հանել ազգային հարմարվողականության առաջնահերթ ոլորտների համար մշակված քաղաքականության իրականացման համար նպաստավոր միջավայրի ստեղծման և դրա ամրապնդման համար անհրաժեշտ պայմանները և նախապայմանները:

Հանդիպմանը մասնակցում էին հետևյալ երկրների՝ Հայաստանի, Բութանի, Կամբոջայի, Եթովպիայի, Գրենադայի, Քենիայի, Լեսոտոյի, Լիբիայի, Նամիբիայի, Պարագվայի, Սենթ Լուսիայի, Զամբիայի և Զիմբաբվեի ներկայացուցիչներ:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- ✓ Ազգային հարմարվողականության ծրագրի գլոբալ ցանցի ներկայացում,
- ✓ Կլիմայի հարմարվողականության կոնցեպտի ներկայացում,
- ✓ Կլիմայի հարմարվողականության, երկրների դիմակայունության բարձրացմանը միտված ծրագրերի պլանավորման և իրականացման գործընթացի համար պահանջվող ներդրումների պլանավորում,
- ✓ կլիմայի հարմարվողականության համապատասխան կարիքների բացահայտում,
- ✓ կլիմայի հարմարվողականության ծրագրի առաջնահերթությունների սահմանման և ռեսուրսների մոբիլիզացիայի համար անհրաժեշտ կարողությունների ներկայացում,
- ✓ կլիմայի հարմարվողականության գործողությունների համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների ներգրավման կայուն ներդրումային ինստիտուցիոնալ շրջանակների սահմանում,
- ✓ կլիմայի փոփոխության նկատմամբ երկրների դիմակայունության բարձրացմանը միտված ներդրումային միջավայրի բարելավում, շահագրգիռ կողմերի շրջանակի ընդլայնում,
- ✓ Հարմարվողականության ազգային ծրագրերի ներդրումային պլանավորման համար ներդրումային կարիքների բացահայտում, այդ թվում՝ ծրագրերի նպատակադրումների, դրա իրականացմանն ուղղված գործողությունների, վերջիններիս արդյունավետ իրականացմանը հասնելու համար ֆինանսավորման կարիքների, իրականացման պլանների և ֆինանսավորման աղբյուրներ ներգրավելու խոչընդոտների բացահայտում,
- ✓ երկրների կլիմայական ֆինանսական հասանելիության և դրանց մոբիլիզացման համար համագործակցության հնարավոր ոլորտների բացահայտում,
- ✓ կլիմայական հարմարվողականության ռիսկերի բացահայտում, դրանց մեղմում և կառավարում,
- ✓ կլիմայի փոփոխության հարմարվողականության տեմպերի արագացման համար հնարավոր տրանսֆորմացիոն փոփոխությունների շրջանակի ներկայացում,
- ✓ մասնավոր հատվածի կլիմայի ֆինանսավորման մոբիլիզացում, կլիմայի ֆինանսավորման գործիքների և խառը ֆինանսավորման դերի ներկայացում,
- ✓ երկրների ախտորոշումը կլիմայի փոփոխությանը հարմարվելու, մասնավորապես, հարմարվողականության ծրագրերի պլանավորումից մինչև իրականացում գործընթացի սեփական փորձի ներկայացում, այդ թվում՝ համապատասխան

ծրագրերում գենդերային հավասարության և սոցիալական ներառականության ասպեկտների ընդգրկվածության վերաբերյալ ազգային մոդելների ներկայացում,

- ✓ կլիմայի հարմարվողականության ծրագրերի ներդրումներ ներգրավելու երկրների փորձի փոխանակում:

7. **Հանդիպումները, ելույթները.**

Աշխատաժողովի առաջին օրը մեկնարկել է «Ազգային հարմարվողականության առաջնահերթությունների իրականացման նախապատրաստում» թեմայով լսումները, որի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են հարմարվողականության ազգային ծրագրերի, ռազմավարական նախագծերի և ծրագրերի կազմման, հարմարվողականության ծրագրերի ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման վերաբերյալ զեկույցներ: Ազգային հարմարվողականության ծրագրի գլոբալ ցանցի ներկայացուցիչը մասնակիցներին ծանոթացրեց ազգային հարմարվողականության առաջնահերթությունների իրականացման նպաստավոր միջավայրի ստեղծման նպատակով անհրաժեշտ քայլերին տիրապետելու, հարմարվողականության առաջնահերթությունները ռազմավարական ծրագրերում ինտեգրելու համար պահանջվող հմտություններին տիրապետելու և գիտելիքներն ամրապնդելու հնարավորություններին:

Աշխատաժողովի առաջին օրվա երկրորդ նիստի ընթացքում վեց երկրներ ներկայացրեցին իրենց փորձը: Մասնակիցներին ընձեռվել էր 6-երկրներից 3-ի ելույթները լսելու հնարավորություն: Ես նախընտրել եմ հետևել Բութանի, Քենիայի և Գրենադայի պատվիրակությունների ելույթներին, ծանոթանալ այդ երկրների կլիմայի փոփոխության ազգային հարմարվողականության փորձառությանը, մասնավորապես, երկրների անցած ճանապարհը, կառավարությունների առջև ծառացած խնդիրները, կլիմայական հարմարվողականության քաղաքականության բացերը և դրանց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները: Քննարկումների ընթացքում մասնակից մյուս երկրներին հնարավորություն ընձեռվեց կարճ ելույթների, հարց ու պատասխանի ժամանակ ներկայացնել սեփական երկրի փորձը: Կլիմայի հարմարվողականության առավել հարուստ և առաջավոր փորձ ունեցող երկրներին, հատկապես Հայաստանին առաջարկվեց կիսվել կլիմայի հարմարվողականության գլոբալ քաղաքականության գործուն մեխանիզմների ազգայնացման հետ կապված փորձառությամբ, հմտություններով և գիտելիքներով:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացրել եմ «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը» ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749-Լ որոշումը: Առանձնահատուկ անդրադարձ եմ կատարել միջոցառումների իրականացման ընթացքում ծագած խնդիրներին և դրանց լուծման ուղղությամբ Շրջակա

միջավայրի նախարարության ձեռնարկած քայլերին: Քանի որ Հայաստանը կլիմայի փոփոխության դեմ հարմարվողականության կառուցակարգեր, ընթացակարգեր հիմնելու տեսանկյունից բավականին առաջավոր դիրքերում է գտնվում ֆորումի մասնակից մյուս երկրների համեմատ, հետևաբար, հայաստանյան պատվիրակության փորձը գրավեց այլ երկրների ուշադրությունը և առիթ դարձավ հետագա համագործակցության հիմքեր դնելուն: Մասնավորապես, հայաստանյան փորձով, Հարմարվողականության ազգային ծրագրում հարմարվողականության առաջնահերթությունները նյութականացնելու, ծրագրում ներառված միջոցառումների ֆինանսավորման ուղիներ գտնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերով հետաքրքրվեցին Նամիբիայի, Եթովպիայի, Պարագվայի, Գրենադայի, Զիմբաբվեի և Քենիայի պատվիրակության անդամները:

Աշխատաժողովի 2-րդ օրը մասնակիցներին ներկայացվեց ռազմավարական ծրագրերի մշակման վերաբերյալ զեկույցներ: Նույն օրվա 2-րդ նիստի շրջանակներում 5 երկրներից յուրաքանչյուրը աշխատաժողովի մասնակիցներին ներկայացրել է.

1. Երկրի մոտեցումը հարմարվողականության ներդրումային պլանավորմանը, հարմարվողականության համար ֆինանսների ավելացմանը,
2. Հարմարվողականության ազգային ծրագրի համակարգողի դերը հարմարվողականության ներդրումային պլանավորման մեջ, ինչպես նաև այս գործընթացում ֆինանսների նախարարության և համապատասխան ոլորտային նախարարությունների դերակատարումը,
3. Ազգային հարմարվողականության ծրագրի առաջնահերթությունները կոնկրետ ֆինանսավորվող գործողությունների վերածելու հարցում երկրների արձանագրած հիմնական հաջողություններն ու երկրների առջև ծառացած մարտահրավերները:

Նշված 5 երկրների թվում, որպես օրինակելի երկիր ընդգրկվել էր նաև Հայաստանը: Հայաստանի անունից հանդես եմ եկել ելույթով և ներկայացրել նշված երեք հարցերի վերաբերյալ Հայաստանի փորձը: Մասնավորապես, կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային ծրագրի ներդրումների հիմնական կարիքները բացահայտելու և հարմարվողականության առաջնահերթությունները միջոցառումների վերածելու և դրանց ֆինանսական ներդրումնային քաղաքականությունը սահմանելու գործընթացի համատեքստում փորձի փոխանակման նպատակով ներկայացրել եմ Հայաստանում գործող համապատասխան ընթացակարգերը, ներդրումները մոբիլիզացնելու գործիքակազմը:

Ելույթում անդրադարձ եմ կատարել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կառուցվածքի, Խորհրդի աշխատակարգի, Խորհրդին ենթակա գործող երեք մշտական աշխատանքային խմբերի գործունեությանը: Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց աշխատաժողովի մասնակիցների

շրջանակներում և ի հետևանք՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց Միջգերատեսչական համակարգման խորհրդի վերաբերյալ լրացուցիչ համագործակցել վերջիններիս հետ:

Ելույթում անդրադարձ եմ կատարել նաև ֆինանսների նախարարության կողմից ամենամյա ֆիսկալ ռիսկերի վերլուծության մեջ Արժույթի Միջազգային Հիմնադրամի (IMF) խորհրդով 2022 թվականից «**Բնական և մարդածին աղետներից առաջացող ֆիսկալ ռիսկեր**» բաժնի ընդգրկմանը: Հայաստանյան այս ձեռքբերումը առանձնահատուկ ուշադրության արժանացավ Գրենադայի պատվիրակության կողմից: Աշխատաժողովի կազմակերպիչների կողմից բարձր գնահատվեց հայաստանյան փորձը և խորհուրդ տրվեց այլ երկրներին Հայաստանի օրինակը, որպես առաջավոր փորձ, օգտագործել իրենց երկրներում կլիմայական քաղաքականությունն արդյունավետ առաջ մղելու և նշանակալի հաջողությունների հասնելու համար:

Ելույթում ներկայացրել եմ նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղղությամբ այլ ճյուղային նախարարությունների դերակատարումը կլիմայական դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունների ներդրումային պլանավորման գործընթացում: Ներկայացրել եմ կլիմայի հարմարվողականության ազգային ծրագրի առաջնահերթությունները կոնկրետ ֆինանսավորվող գործողությունների վերածելու մարտահրավերների շրջանակը և դրանց հաղթահարման ուղղությամբ առաջիկայում ձեռնարկվելիք հնարավոր քայլերը:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Աշխատաժողովի կազմակերպիչները նշեցին, որ կուսումնասիրվի տարբեր երկրների ներկայացված փորձը, կհստակեցվի արձանագրված կարիքները և դրանց ամփոփման արդյունքում որոշում կկայացվի հետագա աշխատաժողովների բովանդակային ուղղությունների վերաբերյալ, որի մասին լրացուցիչ կտեղեկացվեն երկրների ներկայացուցիչներին:

Կոնտակներ փոխանակվեցին Գրենադայի, Եթովպիայի, Պարագվայի և Զիմբաբվեի պատվիրակության ներկայացուցիչների և աշխատաժողովի կազմակերպիչների հետ հետագա համագործակցությունը շարունակելու նպատակով:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Ֆորումի կազմակերպիչները հավաքագրելով աշխատաժողովին մասնակից երկրների կլիմայի հարմարվողականության առաջնահերթությունները ազգային հարմարվողականության ծրագրում և այլ ռազմավարական փաստաթղթերում ինտեգրելու, կլիմայի հարմարվողականության ծրագրերի ներդրումային պլանավորումն արդյունավետ

իրականացման հետ կապված խնդիրները, երկրների առաջ ծառացած մարտահիրավերները, ընդգծեցին, որ կուսումնասիրվի առկա բացերը կրճատելու և արդյունավետ լուծումներ առաջադրելու հնարավորությունները:

**Գործուղվող անձ** **Ոսկեհատ Իսախանյան**

6.03.2024